

## **Արմավիրի Յացիկ գյուղում բացվեց ՔՈԱՖ-ի Երեխայի և ընտանիքի ծառայությունների կենտրոնը**

ԵՐԵՎԱՆ — Սեպտեմբերի 10-ին Արմավիրի մարզի Յացիկ գյուղում տեղի ունեցավ **Յայաստանի մանուկներ բարեգործական հիմնադրամի (ՔՈԱՖ)** Երեխայի և ընտանիքի ծառայությունների կենտրոնի (ԵԸԾԿ) բացման արարողությունը:

Յարյուրից ավելի երեխաների համար նախատեսված կենտրոնի բացմանը ներկա էին ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար **Նարեկ Սկրտչյանը**, Արմավիրի մարզպետ **Ջամբարձում Մաթևոսյանը**, Յացիկի համայնքապետ **Արթուր Եղիազարյանը**, ՔՈԱՖ-ի թիմն ու այլոք:

Նորակառույց կենտրոնն ունի 5 սենյակներ, որոնք առանձնացված են ՔՈԱՖ-ի սոցիալ-հոգեբանական ծառայությունների համար և ապահովում են ծառայությունների առանձնահատկություններով պայմանավորված յուրաքանչյուր այցելուի մասնավոր տարածքը: Կենտրոնում առկա է նաև 3-6 տարեկանների համար նախատեսված խաղային-ուսուցողական տարածք, որտեղ կան բազմաթիվ զարգացնող խաղեր՝ ԼԵԳՈ, սենսորային խաղալիքներ, մազլցման պատ և այլն:

Հոգեբանական և լոգոպեդական ծառայությունների, սոցիալական աշխատանքի ու երեխայի զարգացմանն ուղղված ծրագրերի միջոցով ՔՈԱՖ-ը նպատակ ունի անդրադառնալ համայնքային խնդիրների, ինչպիսիք են մտավոր առողջությունը, սոցիալական խնդիրները, խոսքային դժվարությունները և երեխաների կյանքում նախադարձական կրթության պակասը: Կենտրոնում բոլոր ծառայությունները մատուցվում են բարձր որակավորում ունեցող մասնագետների կողմից:

ՔՈԱՖ-ի աշխատանքը մոտ 2400 բնակչություն ունեցող Յացիկ համայնքում սկսվել է 2014-ին և ներառել բազմաթիվ կրթական, առողջապահական և սոցիալ-տնտեսական նախաձեռնություններ: Հիմնվելով նախկին նախաձեռնությունների վրա՝ նոր կենտրոնի նպատակը Արմավիրի մարզում բնակվող ընտանիքների շարունակական բարեկեցությանը, ծնողավարման հմտությունների զարգացմանն ու երեխաների վաղ կրթությանը նպաստելն է:

«Յացիկի ԵԸԾԿ-ի բացման գլխավոր նպատակը գյուղական և քաղաքային համայնքների միջև առկա անհավասարությունը վերացնելն է: Սոցիալական և մտավոր առողջության ընկալումները փոխելով և գյուղաբնակ մարդկանց հասանելությունը սոցիալական ծառայություններին մեծացնելով՝ մենք ձգտում ենք բարելավել մեր շահառու համայնքներում բնակվող մարդկանց սոցիալական կյանքը: Բացի այդ, կենտրոնում կարևորվում է երեխաների վաղ կրթությունը, ինչը հատկապես կարևոր է Յացիկի նման

համայնքի դեպքում, որտեղ 3-6 տարեկան երեխաները նախադպրոցական կրթության հնարավորություն չունեն մանկապարտեզների սակավաթիվության պատճառով»,- նշեց ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն **Կորյուն Խաչատուրյանը**:

ԵԸԾԿ-ն հիմնվել է ի հիշատակ Անժելա Ասատրյանի, Արա Դավիթյանի, Արամ Բազամյանի, Արմենուհի Օղուրյանի, Պերճ Նազարյանի, Դր. Ջոն Չազլասյանի, Ռոզի Բերբերյանի, Սահակ Սաֆաքյանի և «Newman's Own Foundation»-ի ֆինանսական աջակցությամբ:

### **«Չայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին**

«Չայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Չայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Չիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Չայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները: 2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին: